

ԽԱԶԻԿ ՄԱԼԻԱՍՅԱՆ

# ՀԵ ԼԼԱԴԱՆ



ՊԵՏԶՐԱՏ 1938 ՅԵՐԵՎԱՆ

891.99-93

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961 Ք.

Մ-16

# Հ Ե Լ Լ Ա Դ Ա Ն

ՆԿԱՐՆԵՐԸ

Ե Դ. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն Ի

2209 A II 30752

ՀԻՃԱԽՄԻ Կ

ԷՎԼԱԿԱ



ՀԼԿՅԵՍ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՈՏԱՆԱԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
Ց Ե Ր Ե Վ Ա Ն 1939

Х. МАЛХАСЯН  
ЕЛЛАДА

Гиз. Арм. ССР, Ереван, 1939

2015  
V  
0000

Հելլադան պատկանում է Ծ... գյուղի կոլոնտեսու-  
թյանը: Յերկու տարի առաջ Հելլադան քուռակ եր: Այդ  
հասակում նրա խնամքը հանձնեցին կոմլերիտական Արա-  
յին: Վերջինս Հելլադային կերակրում եր, գետում լողաց-  
նում, մաքրում:

Կենդանին վաղուց խնամատարին մտերմացել եր: Գա-  
լով հեծնելու խնդրին, ձին առաջին անգամ մեջքին ծան-  
րություն զգալով, տրինգ-տրինգ արավ, սլացազ արտանե-  
րով մեկ:

Արան ընկճվող չեր: Նա համբերությամբ Հելլադայի  
գժությունները տարավ: Վերջում հաղթանակեց: Հելլադան  
ընտելացավ:

Նրանք շատ մտերմացան:

Զիավարժը Հելլադայի հետ մեկտեղ պահեց գերմա-  
նական ցեղի մի շուն՝ անունը Տիրո: Տիրոն պատկանում  
եր Արտեմին, Արայի լեղրորը:

Արտեմն աշխատում եր Ղրիմում: Նա կապի վաշտում  
հրամանատարի պաշտոն եր վարում:

Այդ շունը կապի վաշտում հաճախել եր շնավարժա-  
կան ուսումնարան: Այդտեղ Տիրոն սովորել եր ամեն հա-  
վանական ձախորդություններից բարեկամներին ազատել:  
Վարժվել եր թշնամիներից զենքեր հափշտակել: Սքան-  
չելի լեր գերինների կապուտած ձեռքերն ազատելու գործում:  
Նա կապերը ատամներով ծամում եր, կտրտում: Քաջ եր  
նամակատարության մեջ: Տիրոն կարող եր թշնամուն  
խուզարկել, անակնկալի բերել և զինսթափել: Սովորել եր

սահմանապահութիւն, սանիտարական ոգնութիւն և ուրիշ շատ բաներ:

Արձակուրդին Արտեմը յեկավ ծնողների մոտ: Տիրոն նրա հետ եր: Արան ու կենդանին բարեկամացան: Նա յեղբորը խնդրեց, վոր Տիրոյին իրեն նվիրի: Արտեմը զիջեց:

Տղաների հետ յերբեմն խաղում էյին «Կազակի» ռազմիկ խաղը: Արան հաճախակի գերվում եր: Նրա ձեռք ու վտար կապում էյին, գցում փոսի մեջ: Տիրոն ծածուկ Արայի ձեռքի կապերը ծամում, կտրտում եր:

Տիրոն զարմանալի հոտառու յեր: Յերբեմն Արան գնում եր անտառ, մորի հավաքելու: Կենդանին նրա հետքերով գալիս եր, տիրոջը գտնում: Մամնից արտասովորը պատահեց ամառային մի որ: Գիշերն Արան վտով ուղեփորվեց քաղաք: Նա կտրեց ուղիդ 38 կիլոմետր: Հաջորդ որվա իրիկնամուտին դուռը շանկոտեցին: Արան դռան փեղկը բացեց: Տիրոն եր, Սատանա: Հետքերով յեկել եր:

Տիրոն բարեկամացավ և Հելլադայի հետ: Արան քանի անգամ հուզմունքով տեսել եր, թե ինչպես շնիկն իր դունչը հասցրել և Հելլադայի գնչին, լիզում և: Նժույգն սւրբաթութիւնից ունեցերը բացում և, խրինջում, բաշտարածած արշավում հանդով:

\* \* \*

Սեպտեմբերի 28-ին, բերքի տոնի առթիվ, նշանակված եր ձիարշավ: Ծ... գյուղակից պիտի մասնակցեր Հելլադան: Արշավի վայրը մեծ հարթավայրն եր:

Արան նշանակված եր Հելլադայի հեծվոր:

Կուրկտիվի ձիերը կալում աշխատում էյին: Միայն Հելլադան ազատ եր: Արան ամեն առավոտ նրան արձակում եր արոտները, իրիկնագեմին վերադարձնում գոմ:

Մաքրավանքից իրենց գյուղին եր դառնում Տիտոս պապը: Քայլում եր և հոնի ձեռնափայտը համաչափորեն խփում դեպի: Նրա դիմաց տարածված եր կոլտնտեսության արտը: Գյուտ անող մարդու նման Տիտոս պապը ժպտում եր: Առաջներում այստեղ փոքրիկ արտեր էլին, իրարից բաժանվում էլին միջնակներով, իսկ հիմա չքացել են այդ բոլոր միջնակները և ձգվում ե անծայրածիր արտը:

Տիտոս պապը խորիմաստ կերպով գլուխն որորեց.

— Աշխարհի բանը դու տես ե... Ինչեք կատարվեցին...

Հնձած արտի մեջտեղում կար մի բավական ընդարձակ տարածութուն: Յերեվում եր, վոր նախքան հնձելը, հասած հասկերը հրդեհել էլին, բայց շուտով այդ հրդեհը հանգցրել էլին, վորովհետև արտն ամբողջովին հրդեհված չեք: Հրդեհի վայրում դեռևս թափթփված էլին սև մոխիր դարձած հասկերի արմատներն ու գլուխները:

— Շան վորդի շներ... մարդկանց արյունը խման բոլ չելավ, հիմա ել արտերին կպան...

Գործին տեղյակ մարդն անմիջապես կհասկանար, վոր Տիտոս պապը խոսում եր կուլակաթափ արված և բանդիտ դարձած Լազոյի ու նրա կաթնեղբայր Շավասայի մասին:

Առաջներում, թագավորի ժամանակ Լազոյին ասում էլին «յոթը գյուղերի գահընկեց պրքա»: Նա յոթը գյուղերի վաշխառու յեր, յոթը գյուղերի ամենահարուստ մարդը: Բացի այդ, մի կաշվի գործարան ուներ, խանութ ուներ, առևտրական գործեր ուներ: Իսկ Շավասայ Բայրամը ցարական սպա յեր, վորը քաղաքացիական կռիվներից հետո, վորպեսզի իր դիմակը չպատուվի, հեռու տեղերից յեկել եր Ծ... գյուղը, փոխել եր անունը, ազգանունը և դարձել եր գյուղխորհրդի քարտուղար:

Կռիվաբեկության ժամանակ սկսեցին վնասարարութուն անել, բայց հենց վոր տեսան իրենց կեղտոտ գոր-

ծերը քացվում են, փախան սարերը: Այնտեղից ել նրանք դարձյալ շարունակում եյին իրենց կեդոտոս գործերը:

Այն հրդեհված արար, վորին հանդիպեց Տիտոս պապը, դարձյալ նրանց ձեռքի գործն եր:

Ահա թե ում մասին եր խոսում Տիտոս պապը:

Տիտոս պապը Լազոյին լավ եր ճանաչում: Թագավորի ժամանակ նրա մոտ սայլապան եր յեղել:

Հանկարծ ճանապարհին ձիու գոփյուն լսվեց:

Ձին կրակ կտրած վազում եր: Անբնդհատ լսվում եր հեծյալի մտրակի շրխկոցն ողում:

— Ես մեր Հելլադան ա, տո... վրան ել Լազոն...

\* \* \*

Հենց այդ որն ել Ծ... գյուղակի հանդերում Արան Հելլադային շատ վորոնեց: Անցավ սարալանջերով, քայլեց անդրնդախոր ձորերում, բարձրացավ դիմացի բլրի կատարը:

Անհավատալի խաղաղությամբ մութը փոփում եր: Յերկնակամարում ահաշունչ գոռոցներով ամպակույտերը միմյանց ճնշում եյին: Յերախարաց ձորերում նիրհելով սողում եր թանձր մառախուղը:

Լեռնաշարքերից այս կողմ տարածվում եր ընդարձակ հարթավայրը: Այնտեղ վոլորվում եր Չանգուն:

Հելլադան չկար:

Արան գայրույթից շրթունքները կծոտում եր: Նա յերկար վորոնումներ կատարելուց հոգնել եր, աչքերը գոցվում եյին: Երջապատը նորից գննեց, իջավ դետափ: Յերեննիվայր պառկեց, դեմքը թագցրեց բաղուկների մեջ: Կանաչը քսվում եր այտերին:

Տիրոն յեկավ: Նա վարանոտ մոտեցավ, տիրոջ ձեռքերը լիղեց:

— Տիրո, անուշ ջան, մոտ արի. — ասաց ու ջանը սեղմեց կրծքին. — քաղցրիկա, Հելլադան չկա, մանեման յեկա սարերում, են հեռավոր անտառում: Չկա:



Տիբոն հոտոտեց ողբ, կանաչը և քայլեց: Նա դունչն ուղղեց դեպի Ալիբեկի փեշերը, դարձավ Արային: Տիբոն հաջեց, Արան մտածմունքից սթափվեց:

— Հելլադան եդ կո՞ղմն ե, հմ: Գտի՞ր նրան, ջանա:

Հանկարծ թանկ-թուկ-թանկ-թուկ, փոշոտ սալլուղիով ընթանում եր Տիտոս պապը: Նա քայլում եր, հոնի ձեռնափայտը գետնին դարեկերով:

— Բարե, Տիտոս պապ:

— Աստծու բարին, բալիկ ջան, ի՞նչ կա:

— Հելլադան կորել ե, շատ ման լեկա: Չկա:

Ծերունու դեմքով մի մութ սուվեր անցավ: Կնճիտները խորացան:

— Տարավ, բալիկ ջան, շուն Լազոն տարավ:

— Եդ վո՞նց...

Տիտոս պապն արխալուղի գրպանից քաշեց թուխունի ծալքավոր քիսան, փաթաթեց մի ծխախոտ, վառեց ու պատմեց, ինչ վոր ճանապարհին իր հետ պատահել եր:

— Պապ, վո՞ր կողմը թոան:

— Ալիբեկի, անուշ ջան.— ասաց ձերունին ու առաջ անցավ:

Տիբոն անցնում եր հեռի քարակույտերի վրայով: Ծուտով ընկավ սալլուղին, շեղակի կտրեց, բարձրացավ մի փոքրիկ հողաթուփը:

Այստեղ փխրուն սևահողի մեջ դրոշմված եր ձիու պատանշանը: Տիբոն լերկանր-լերկանր հաջեց:

Արան սթափվեց, գալրացավ իր թուլության վրա: Բահ, աչքերը թացանում են: Զիու համար աչքերը լվանալ: Յերեխա: Բայց ի՞նչ անել...

Նրա հիշողության մեջ վերապատկերվեցին արկածային վեպերն ու պատմությունները, նրանց եջերում ապրող արիասիրտ հերոսները:

Անհետացած Հելլադային Արան պսակեց ցնորքներով:

Ահա նա, «յոթ գյուղերի գանձակեց արքան»,— Լազոն:  
Ահա նախկին ոտամիտար Շավասպը... Կրակոցներ են, կռիվ  
ե, մութ ձորակներ են, կոտորված լեռներ... Արան հրաշքով  
Հելլադային ազատել ե, ճողոպրում ե ախոյաններից...

Հանկարծ կաշձակը շրխկաց: Անձրեը խշխշաց: Արան  
տեղից թռավ:

— Տիրո, Տիրո.— կանչեց ու սլացավ

Տիրոն հետևեց նրան:

Արան հասավ տուն: Շորերից անձրեվաջուրը շաշ-  
ուում եր:

Հայրը, անտառապահ Թորոսը, թափառումներից վե-  
րագարձել եր ու քնել:

Գիշեր եր:

Լուսադեմին Արան արթնացավ սովորականից վաղ:  
Մայրն ասաց, վոր ամուսինը շամանդաղին մեկնել ե ու-  
րախուժյան սարավանդը, վորսի:

— Տիրոյին տարել ե,— հարցրեց Արան:

— Տարել ե,— պատասխանեց մայրը:

Արան շտապ թեյ խմեց: Մորն ասաց, թե տղաների  
հետ գնում ե անտառ մի քիչ շրջելու:

Քաթանի տոպրակը լցրեց հաց ու սլանրով և տանից  
դուրս գնաց:

Ձգում եր, վոր ձեռնարկում ե մի տարորինակ գործի:

Տիրոյի բացակայությունն անախորժ եր: Կենդանին  
իր հոտառությամբ ու բնազդով թերևս ոգներ իրեն: Հայրը  
կվերադառնար գիշերը, սպասեր Տիրոյին, ստիպված կլի-  
ներ վորոնումները հետաձգել: Համբերել անկարող եր:

Ավազակը Հելլադային թողրել ե ով գիտի ինչ սար  
ու ձորով: Կարել ե ով գիտի քանի արահետ ու ճանա-  
պարհ:

Յե՛լ Արան հատաստ վորոշեց Հելլադային գտնել:

Ահա և անտառի կեսորը: Աշնանային տապ ու կծու արեւ: Թ՛վում էր, թէ կյանքը մեռել է: Լուսթյուն:

Լսվեց չոր տերեւների խշրտոց: Անտառում յերևաց Արան: Թողնում էր հուսալքված մարդու տպավորություն: Փնտռում էր ինչ վոր բան: Վորոնածը գտավ՝ խաշամով պարուրված շավիղ էր: Այս ճանապարհով նա առաջ անցավ:

Արան իջավ մի գոգավոր փոս: Նրա դեմք բարձրացան մի զուգգ քարաժայռ: Նրանց տակից մի զուլալ աղբյուր էր ցայտում:

Աղբյուրի մոտ Արան ուսից վերցրեց քաթանե տոպրակը, չոքեց միմյանց մոտ շարված սալաքարերին: Ագահությամբ ջուր խմեց: Հետո դով տեղ վորոնեց:

Արան տեղավորվեց աղբյուրի յեզրին, ավելուկների մեջ: Հանեց լավաշների փաթեթը, թրջեց, դրեց գետնին փռած տոպրակին: Ախորժակով պանրի հետ սկսեց ուտել:

Իմացի բարձունքից դանդաղ իջնում էին յերկու ձիավոր: Ձիերից առաջինը սև էր, մյուսը՝ սիպտակ:

Բարձունքը հեռու յեր: Նրա գագաթն ողակված էր քարաժայռերի շղթայով, իսկ փեշերը պատում էր խիտ անտառ:

Սև ձի, մանրիկ ու թեթև քայլք... Նա յե... Արան վազում էր ու վազում: Ծառերի սողարթը զարնվում էր նրա այտերին, ձեռքերին ու ականջներին:

Նրա հայացքը կախարդված էր բլրով: Ծուռով ընկավ անտառի խորքը: Սողարթի խտությունից արևի լույսն այստեղ ճանապարհ չուներ: Երջապատը համակված էր սառնաշունչ կիսամութով:

Բարձունքն Արալի աչքերից անհետացավ: Վազքի արագությունը կրկնապատկեց: Բայց... Իժնխք ու սարսափ... Գահավիժվեց փոսի մեջ: Աղվեսների թակարդ էր, ծածկված մանրիկ ճյուղերով ու չոր խոտով: Փոսից հագիվ դուրս յեկավ:

Վերջապես, ահա բարձունքը: Արան շուրջը դիտում եր:  
Զիալորներն անհետացել էյին: Արան տեղից կարվեց,  
անցավ բլրափեշի ձախ թևին ծավալված անտառով: Զիերի  
վայրեջքն ուղղված եր այդ կողմը:

Շատ վազեց: Վաչրի սալորենին ձեռքը պատռեց. վեր-  
քը վողողվեց արյունով: Վտտերի ուժը հատավ, սրունք-  
ների մեջ կարծես շիկացած շյուղեր խրեցին: Մի փոքրիկ  
բացուտում նա փուլեց գետնին:

Արևը խայթում եր: Թուխ ամպերը թանձրանում ե-  
լին, հարավից սահում հյուսիս:

Չորակի մամռակալված առվում գորտերը զրուցում  
էյին: Նրանց ձայնի մեջ անմեկին տագնապ կար: Ակնե-  
րեվ եր, վոր անձրեվ պիտի գար:

Արան քնեց:

Արևը շղարշվեց ամպերով: Անտառն ահարկու շառա-  
չեց: Անցան ժամեր: Քամին կատաղեց:

Անտառը խրախճանքի մեջ եր:

Արան խողաղ քնած եր: Շրթունքների բացվածքից  
նկատվում եր ատամնաշարքը, շուշանի պես ձերմակ:

Յերկնակամարում ամպակույտերը միմյանց ճնշում  
էյին: Զայրույթից նրանք խեղդում էյին սարերի կատար-  
ները, գալարվում:

Հեռուներում բռնկվեցին կայծակներ: Նրանց վոսկե-  
ղեն թրերը շողշողացին, ապա մարեցին:

Հանկարծ անտառի գլխավերեվում շառաչեց մի նոր  
կայծակ: Վորտըր յերկնակամարի կուրծքը կարծես ձեղ-  
քեց:

Արան անձրևից սթափվեց: Այստեղ ինչ գործ ունի,  
անտառի խորքում, անձրևոտ յեղանակին: Հետո գիտակ-  
ցությունը զուլարվեց, հիշեց, թե ինչպես ե ընկել այստեղ:

Արան անցավ յերկու սարավանդ և մի ընդարձակ բա-  
ցուտ: Նա արահետով մազլցեց դիմացի բլրի կատարը: Անձ-  
րևից հողն ու կանաչը դարձել էյին վողորկ: Վտտերը հա-

ճախ սայթաքում էյին: Վերջապես հասավ բարձունքին: Բարաժայտերի կույտերը, ասես աժդահա ուռմբեր, դարսված էյին միմյանց վրա: Մեջընդմեջ աճել էյին մասրենիները և ալուճի մացառներ:

Սալաքարերի մեջտեղում թառել էր Սուրբ Ավոյի հովիվը: Ասում են Սուրբ Ավոն յեղել է մի շերմեռանդ ճգնավոր: Յերխտասարգությունից՝ մինչև ծերություն, մինչև մահ ճգնել է այդ քարակոփ շինվածքում: Հովիվը փորված էր մի աժդահա քարաժայռի մեջ:

Հնագետների կարծիքով այդ շենքը կառուցել են հայ պայազատները: Դուրս են յեկել վորսի, վատ յեղանակներին պատսպարվել են ալդտեղ: Դրա պատմությունը շատ հին է:

Արան հովիկի կիսաշարդ դռնակը հրեց, ցատկեց ներս: Դա մի ընդարձակ տուն էր, պատերը քար, առաստաղը քար, հատակը քար: Բոլորը հղկված, բոլորը վողորկ: Յուրաքանչյուր պատի մեջտեղում բացված էր մի լուսանցք: Նրանցից մեկի տակ փորված էր բուխարիկը՝ պայտաձև, գեղեցիկ:

Հովիկի հատակին թափթփված էր անտառի չոր ու դեղնած խոտ, ցրված էյին կոճղեր, ծառերի չոր ճյուղեր:

Արան նստեց կոճղերից մեկին: Նորից կայծակը փայլատակեց: Առաստաղի անցքից խշշոցով խոտի վրա շարվում էյին անձրևակաթիլները: Նա՛ տխուր խորհում էր:

Մութը շատ թանձրացավ:

Դրսից վտանաձայներ լսվեցին: Հովիկի դռնակը բացվեց: Արան սարսուեց:

Յափուռնչիները մեջ փաթաթված ներս մտան յերկու հոգի: Յուրաքանչյուրն ուսել էր մի հրացան: Նրանք քաշում էյին ձիերի սանձերից:

Արան գլխի ընկավ, առաջինը Լազն էր: Հաջորդին նա շուտ ճանաչեց. Շավասպն էր:

Շավասպը խուրջինից մի կտոր մոմ հանեց ու վառեց:

— Պահն, ես վճրտեղից, աղա, յերկնքից իջար.— գար-  
մանքով հարցրեց Լազոն:

Արային քրտինք պատեց:

— Մոտիկ գյուղից եմ գալիս, ճանապարհին անձրևը  
խշշաց, պահվեցի այստեղ:

Հելլադան Արային նկատեց: Նրա խրխինջից բնակա-  
րանը դողաց:

— Չան, ջան.— գոչեց Լազոն:

Հելլադան ուրախ դոփում էր, սանձը քաշկոտում: Բո-  
լորովին սև, բարակիրան նժույգ էր, ուներ նեղ ու պինդ  
սրունքներ, հանգույցավոր պոչ:

Լազոն ձիերին կապեց պատի ճեղքվածքում մեխված  
յերկաթե զույգ կեռերին: Ըստ յերեվույթին հուլիկի քունջ  
ու պուճախին քաջ ծանոթ էր, փտած խոտի տակից դուրս  
քաշեց թարմ կանաչի կույտեր, լցրեց ձիերի առաջ: Մպի-  
տակ ձին սկսեց ախորժակով ուտել: Նախկին ուտածիստը  
նրանց մեջքերը թամբերից ազատեց: Հելլադան խելացի  
հայացքով Արային դիտում էր, թառանչում:

— Տղա, վճրտեղացի յես.— հարցրեց Լազոն:

Արան պատասխանեց.

— Ես ձիուն կճանաչեմ,— Լազոն ցուցամատն ուղղեց  
Հելլադային:

— Հն, անունը Հելլադա յե,— ասաց Արան:

— Ի՞նչ, Հավլաբան,— գարմացավ Լազոն:

Նա հագի յափնջին հանեց, փռեց հատակին:

— Յերեկ կեսորին թոցրեցի, կերթաս գեղի կոլտոզա-  
կաններին կասես, վոր ման չգան, զուր տեղը նեղություն  
չքաշեն, ձին ինձ մոտ ա...

Նախկին ուտածիստը պառկել էր յափնջու վրա,  
թիկնել մի կոճղի՝ ծխում էր:

— Շավասպ ախպեր— ձայնեց Լազոն— կրակ չանե՞նք...  
Լակոտ ջան, տեղիցդ թոխ, ես փետի կտորտանքը, ես խա-  
ռախուռեքը հավաքի, լից բուխարիկն ու կրակը մուր... Առ  
սպիչկա...

Ի՞նչ հետո Արայի վառած կրակն աղմկում էր:

Շուտով Շավասալն ու Լազոն ընթրեցին: Նրանց ընթրիքը բաղկացած էր հացից ու չորացած պանրի մի մեծ կտորից:

Լազոն Արայի ուսից կախված քաթանի տոպրակը նկատեց:

— Տղա, տոպրակդ մի դեսը տուր, տեսնենք ի՞նչ ունես:

Յե՛վ իհարկե տոպրակը դատարկեց:

Ի՞նչ հետո խուրջիներն էլ մեկի միջից Լազոն հանեց գինու մի կիսատ շիշ: Շուտով այդ շիշը նախկին ոտամիստրի հետ դատարկեցին ու նորից տեղավորեցին խուրջինի մեջ: Լուռ թյուն:

— Ա՛յ շան սղա, տեսնո՞ւմ ես, ծվարել ենք ես սատանի պուճախը, մեր կուլ տվածը շան լակից վատ է... Ախր հանուն ինչի՞, հա՛... Յոթը գյուղ բռանա մեջ դողում եր, առաջ կանգնող մարդու վտաններն ահի՛ղ ծավլում էլին, մարդ էլի, մարդ... Որական յես ասեմ հարյուր, դու ասա հազար մարդ տանս փշրանքներով կերակրվում էլին: Մարդիկ անունս արտասանում էլին ակնածանքով, աղոթում էլին ամենագորին իմ յերկար կյանքի համար: Մարդ էլի, մարդ: Այ, ես ել Շավասալ Բայրամն ա, ինչ գորական եր, գիտես, կովի ժամանակ նեմեցներին մատների վրա խաղացնում եր... Մեր կյանքը պղտորեցին կուսակցականները: Նրանց մեկ-մեկ թրևկացնելու յենք: Լսեցիր շրջագործկոմի նախագահի սպանութչան մասին: Ավտոյով թռչում եր, առաջը կտրեցինք, մատուցերի փոզը դրեցի ճակատին և թրանխկ... Թավալեց, մրմնջաց ու մեռավ...

Նախկին ոտամիստրը լռելյայն ընթրում էր:

Ընթրիքը վերջացավ: Արայի աչքերն հանդիպեցին Շավասալի թունոտ հայացքին:

— Ինի ճուտ, քեզ պետք է կապել, թե չե գիշերն

ես բնից կպրծնես դուրս, մեզ կձգես թալակը, — ասաց Լազոն և խուրջիներեցից մեկի միջից հանեց պարանի մի կտոր: Նա մոտեցավ Արային:

Քիչ հետո Արայի ձեռք ու վոտքը ամուր կապկպված եր: Լազոն փաթաթվեց յափուռնջուռ մեջ և ձգվեց Շափասպի կողքին; ապա տեղից լելավ, հրազեններն ամուր գրկեց ու նորից շուլարվեց գետնին: Հելլադային փրկելու հույսերը մարեցին: Արային ծանր թախիժ պաշարեց:

Անձրեն արդեն դադարել էր: Լուսնի ձերմակ լույսը հուլիկի հերթիկից և լուսանցքներից ներս եր թափվում:

Անտառը խուլ աղմկում էր: Դրսում արշավում էր քամին:

Նախկին ռոտմիսարն ու Լազոն տարվել էին խորը քնով:

Արայի աչքերից քունը փախել էր:

— Հիմա տնեցիք ինձ ման են գալիս... իսկ առավոտյան ձիարշավ ե...

Նրա հայացքն առավ Լազոյին: Նա պառկել էր ուղիղ մեջքի վրա, բեխերը շողալավել էին բուխարիկում թարթվող կրակի հրով: Նրանք խորհրդավոր տեսք էին ստացել:

— Ա՛խ, թե ճար լիներ վճնց կպոկեյի եղ կեղտոտ պոչերը, — մրմնջաց Արան:

Տնակի դուռը չանկոնեցին:

Անտառի խորքում ծվաց գիշերահավն ու լռեց: Չանկոնցի ձայները դադարեցին: Քիչ հետո կառուրից քստքըստոց լավեց:

Արան գլուխը վեր քաշեց, առաստաղի անցքից կախված էր մի կլոր առարկա:

— Տի՛րո.— կամացուկ կանչեց Արան ու սարսուռով շուրջը դիտեց:

Չգարթնեցին: Չե, քնած են...

Հովեց թեթև թրմիոց: Առաստաղը ցածր էր և անվր-  
տանգ: Տիբոն հերթիկից ներս թռավ: Արան նորից նայեց  
շուրջը:

Չզարթնեցին: Չէ, քնած են...

— Տիբո, անուշիկս, անզինս, քաղցրիկս, ազաաիր ձեռ-  
քերս, — մրմնջաց Արան:

Կենդանին սաստիկ հեվում էր: Նա փաղաքշանքով  
տիրոջ ձեռքերը լիզեց:

Տիբոն սկսեց պարանն ատամներով ծամծամել ու կտրը-  
տել:

Քիչ հետո Արան ազատ էր: Նա առաջացավ դեպի Հել-  
լադան:

— Տիբո, սնու:

---

Անաստոււմ հողմը սուլում էր: Ծառերը հոգնած հեռւմ  
էյին:

Լիալուսինը նմանվում էր հրդեհվող կղզու, ցոլում էր  
շքեղ:

Արան Հելլադային խթանում էր: Սլանում էլին: Նրանց  
հեռուում էր Տիբոն: Սայլուղին վոլոր-մոլոր ձգվում էր  
առաջ: Տեղ-տեղ հանդիպում էյին ձագարածև խոռոչներ,  
պղտոր անձրեվաջրով լցված:

Ծառերից կաթիլթում էյին անձրեվակաթիլները:

Յերկինքը զարմանալի ջինջ էր: Սպիտակ ամպեր կա-  
յին, սահում էյին դանդաղ ու համրընթաց: Նրանք նուրբ  
էյին, կարծես լուսնի շողերից հյուսված կերպաններ լի-  
նէյին:

Շուտով հասան այնտեղ, ուր ճանապարհը բաժան-  
վում էր յերկու մասի: Առաջինը տանում էր դեպի շրջա-  
նային կենտրոնը, մյուսը՝ Ծ... գյուղը:

— Վճր ճանապարհն ընարեմ, — մտածում էր Արան: —

Սլանամ գյուղ, իմաց տամ նրանց մասին, արշավից կուշա-

նամ... Քուչեմ կենտրոն... Այսար մինչև հասնեմ այնտեղ,  
լույսը կբացվի, եղ անիծվածներն ել կարթնանան ու  
կչլվեն... Ինչպես անել...

Այդ պահին Տիրոն կլանչեց: Անտառը զրնգաց: Կեն-  
դանին դունչը պարզեց վեր, հոտոտեց: Ի՞նչ, չգիտես, գուցե  
նապաստակի հոտ առաջ:

Արան ձեռքը տարավ գրպանը, դուրս քաշեց մի խու-  
նացած բլուկնոտ ու մատիտ: Թղթի ճակատին գրեց.

«Գյուղխորհրդի նախագահ Աբեթյանին...»: Հետո շարեց  
ելի մի քանի տող: Թուղթը քառակուսի ծալեց:

— Տիրո, անուշիկս, վերցրու ես, մի շնչով թռիր տուն,  
ուժը կպատահես տուր նրան, դե՛, թռիր...

Շունը թուղթը բերանն առավ, մոռաց, պոչը թափա-  
հարեց, թռավ:

Քիչ հետո անտառը նրան կլանեց:

Այդ տարի շրջանը բերքահավաքը կատարել եր շատ  
հաջող և ժամանակից շուտ: Մի խոսքով պլանները գե-  
րակատարել եր:

Բերքահավաքը հաջող ավարտելու առթիվ շրջկենտրո-  
նում սեպտեմբերի 28-ին բերքի տոն եր կազմակերպվել:

Միաժամանակ այդ ուրը լինելու լեր նաև ձիարշավ:  
Մրցելու եյին շրջանի կուտնտեսությունների ձիերը: Շըր-  
ջանային մրցման առաջավորները պետք է հետագայում  
մասնակցեյին հանրապետական ձիարշավին:

Բերքի տոնի ուրը լավ արև արեց: Արևի լույսը փո-  
ղոցներում շողաց թե չե, սկսեցին քաղաքի հրապարակը  
հոսել գյուղերից ու ավաններից յեկած կուտնտեսական-  
ները:

Ինչպես բոլոր հանդիսավոր ուրերին, այնպես էլ այդ  
ուրը, մարդկանց հայացքներից կարելի յեր գուշակել նրանց  
արտակարգ ուրախ արամադրության մասին:



2209

A II 30752

Մարդիկ հագել եյին իրենց տոնական որվա հագուստները:

Ահա Տիտոս պապը: Նրա անցյալ կյանքի չքավորութեան մասին շատ բաներ են պատմում: Ասում են մարդավարի շոր չեր հագնում, մեշոկը ծակում եր, մտնում մեջը: Նրա ընտանիքը տոն որերին չորթնե սպաս եր ուտում:

Իսկ այժմ նա սավրվել եր, յերկարաճիտ կոշիկներ եր հագել: Հագին անցյալ տարի Յերեվանից գնած կուսալումն եր, վրան ել բոլորովին նոր քուրքը:

Իրենց կոլտնտեսութունում նա կարտոֆիլը մշակել ե բոլորովին նոր ձևով, ստացել ե չտեսնված բերք: Բերքի տոնի ցուցահանդեսում կային նրա մշակած կարտոֆիլի նմուշները:

Իսկ հրապարակում, դիկտից կառուցված ծածկոցներում խնամքով շարված են ցուցահանդեսի եքսպոզիտները:

Տիտոս պապը գլխին ե հավաքել մի խումբ մարդկանց և արդեն տասերորդ անգամ պատմում ե կարտոֆիլ մշակելու իր նոր ձևի մասին:

Մի ուրիշ գյուղի կոլտնտեսականներ իրենց գլխի շուրջն են հավաքել իրենց հարևան գյուղերի կոլտնտեսականներին: Ապակեպատ արկղերի մեջ լցված են նրանց մշակած ցորենի նոր տեսակները:

Առանձին-առանձին ցանկապատերի մեջ եյին առնված կոլտնտեսականների խնամած անասունները, կով, յեղ, ցուլ, փոչխար, այծ, խոզ և այլն:

Ինքնագոծ փայլում էլին ուժեղ, մկանուտ ցուլերի և յեղների աչքերը: Կովերը հեղուկթյամբ նայում եյին իրենց դիտող ամբոխին: Յերբեմն խանչում եյին խոզերը և մրկելում եյին այծերը: Ամենից խաղաղը չաղ, գանգրահեր փոչխարներն եյին:

Առանձին բաժնում պատերի վրա փակցրած եյին շըր-

Չանի լավագուշն աշխատող կուտնտեսականները նկար-  
ները:

Սև Քարեցի կուտնտեսուհի Սիմիզարը, նայում էր իր  
նկարին, նայում է մի քիչ էլ ամաչում: Իր նկարն է, բայց ին-  
քը կարծես բոլորից շատ է նայում: Կողքի մարդիկն էլ,  
յերևի, այդ նկատում են:

Շրջանում հայտնի կթվորուհի լե նա:

Տխոտս պապն էլ ամենայն համարձակությամբ կտրել  
է իր նկարի առաջը.

— Հրամանքդ, ժողովուրդդ, ես իմ, այսինքն ըստ անար-  
ժանիս պատկերքն ա... Ե՛խ, մարդ արարած, սֆաթիդ դա-  
րուն ա իջել...

Ամպերը ծծմբի գուշն եյին առել: Արշալույսը պայ-  
ծառ բոցավառվում էր: Շրջանային կենտրոնի փողոցնե-  
րով սլանում էր Հելլադան: Հեծյալի դեմքն ինքնաբավակա-  
նությունից փայլում էր:

Ձիալորը քաղաքից դուրս յեկավ: Նա ընկավ հանդա-  
միջյան ճանապարհը: Չորս դին տարածվում էյին հնձված  
արտեր: Քարքարոտ միջնակների վրա արածում էլին մի  
քանի յերինջ, հորթուկներ և մի չաղ մատակ ձի:

Արան կանգ առավ մի ընդարձակ հրապարակի մոտ:  
Հետաքրքրությունից դրդված, հեռու-մոտիկ ավաններից  
աչնտեղ էյին յեկել տղամարդիկ, կանայք, պատանիներ:  
Շուտով կսկսվեք ձիարշավը: Հանդիսատեսներից վոմանք  
ըջափակել էյին արշավին մասնակցող յերիվարներին, գո-  
վաբանում կամ նշավակում էյին այս կամ այն ձիուն, լեն-  
թադրում էյին թե դրանցից վորը կհաղթանակի, գրագ ե-  
յին գալիս, խիտտ վիճաբանում:

Ձիերի սանձերից բռնած, իրար մոտ շարվել էլին  
հեծյալները:

Հանդիսատեսներից վոմանք աշխատում էյին նրանց  
հետ զրուցել:

Հրապարակի մոտ Արան ձիուց իջավ:

Բազմությունը նրան շրջապատեց:

— Այ, ինչ քյահւրան ձի յե, գտած վոսկի, սա կհաղթի,— կանխորոշեց մի գեղեցիկ յերիտառարդ:

Համախմբվածներն սկսեցին խոսքերի կարկուտ տեղալ:

— Հեծյալը պատիկ ե, ձին դրան տակովը կանի:

— Տղն, վնրտեղացի լես...

— Վասնա, Արան — վնրտեղից-վորտեղ, մեջ ընկավ Տիտոս պապը, — անուշ ջան, եդ ինչ հնարքով:

— Տիտոս պապ, պատմությունը յերկար ե, ձմռան գիշերին հարմար, հետո կպատմեմ, — ձեռքը թափահարելով ասաց Արան ու Հեյլադայի կողը շփեց:

Հանկարծ տագնապ առաջացավ և ողը ձեղքելով ամենուրեք տարածվեց.

— Պատրաստվել արշավի:

Արան Հեյլադայի դունչը շոյեց:

— Անուշիկս, հոգնած ես, մրցելու ուժ ունեմ:

Յերթվարը հարուստ բաշը թափ տվեց, փոնչաց:

Պատասխանը դրական եր:

Տասներկու շրուտ ձի մեծ վարգով առաջանում էին: Այնտեղ, ուր Մեծ սարի փեշերը մերվում են Սիդան հարթավայրի հետ, կա մի ասֆալտած խճուղի: Այստեղով անցնում էին մրցակիցները, ձիերին թեթև խթանելով:

Ճանապարհի յեղբերին հանգիպում էին կարմիր դրոշակավոր պահսորդներ: Հարթավայրում շարված մասրենիների վրա ազմկում էին թռչունները: Մոտակա սարերի ժայռապատ կառարները փայլելում էին:

Հեծյալները դեռ ձիերի ուժը խնայում էին, սպասում էին վերջին ու վճռական պահին: Առայժմ նրանք ուրախ կատակում էին:

— Ե՛յ, ախպերացու, քո ձին քոստախ մեկն է, կասես հենց նոր գերեզմանից ա դուրս յեկել: Մեղք ա, մեղք, մի չարչարի՛ր, տա՛ր, կապի գոմը, — մոթալ փափախը գլխին քաշած մի գյուղացի դիմում եր ջարդված ատամով մի յերիտասարդի: Վերջինս հեծել եր մի ջահել աշխես ձի:

— Բեռնի, լեղուգ իր բունը քաշի, կտեսնենք ում ձին է քոստո, — պատասխանեց ջարդված ատամով յերիտասարդն ու ինքնազոհ ժպտաց:

Մրցակիցների պոչից քարշ ընկած, Արան իր ձիուն խթանեց: Հելլադան թռավ բոլորից առաջ:

— Ֆինի՛շ, տղերք, յերեխան հաղթեց, հա՛, հա՛, հա՛, — կատակախոսեցին այս ու այն կողմից:

Արան պաշարված եր անորոշ տրամությամբ: Հելլադան Սուրբ Ավոյի հուլիկից մինչև այստեղ քայլել եր: Արդյոք նա չէր հոգնել: Հետո այստեղ այնպես լավ ձիեր կան...

Բայց հուզմունքը սրտում լեռնանում եր: Այլևս մտածել անկարող եր:

Մեծ սարը շրջելով, մրցակիցները պետք է հակառակ կողմից մուտք գործելին շրջանային կենտրոնը: Նրանք պարտավոր եյին յերկու անգամ ասֆալտած խճուղին շրջել:

Արևն արդեն մոտենում եր գինիթին:

Հեծյալներն աննկատելիորեն ձիերի վազքն արագացնում ելին, աչքերի պոչով միմյանց չափչփում:

Ձիերն ել կարծես զգում եյին, վոր հետզհետե մոտենում է վճռական րոպեն: Նրանք անհանգիստ փնջացնում եյին, սանձերը քաշկռտում:

— Ե՛յ, պատիկ, մի վազիր, յետ կմնաս, — Արայի լետեվից ձայնեց մոթալ փափախով գյուղացին: Նա հեծել եր մի հաղթանդամ զամբիկ:

Արդեն մոտենում եյին քաղաքին:

Չիափորներն աշխուժացան: Միանգամից մտրակները շրմփացին: Բոլորովին անսպասելի կերպով Արան Հելլադալին խթանեց: Ասուպի արագությամբ նժուլգը թռավ:

— Ֆյոն, յերեխան թռամ:

— Քշեք, տղերք, — վորոտացին մի քանի ձայներ:

Կտարած ատամով յերիտասարդն իր ձին ասպանդակեց: Վերջինս խրխնջաց ու թռամ: Նա Հելլադայից առաջ անցավ:

— Վան — գայրացավ Արան ու շնջաց — Հելլադան, ազիր, թևավորվիր:

Նժույզը ցայտուն ուռնգերը լայն բացեց: Ձին լիաթոր ծծեց թարմ ողն ու կողերին զգաց ասպանդակների զարկերը: Նա պարանոցին կամարի ձև տվեց, սլացավ:

Ջարդված ատամով յերիտասարդի աշխետ նժույզի վտոնները խճճվեցին իրար: Ձին յերերաց, կանգ առավ, յետ-յետ գնաց: Մինչ այս, մինչ այն, Հելլադան առաջ սլացավ:

Քամին նրա մազերը փուցնում եր, շնկշնկում ականջները մեջ:


Հաճույքից Արան փորձում եր մի ակնթարթում կլանել արևի բոլոր ճառագայթները:

— Ամոթ ե, տղերք, յերեխան հաղթեց, թուեք, — ձայն տվեց մի շահել գյուղացի:

Մի պահ, և ձիավորները Հելլադային յետ կը թողնեյին, արդեն հասել էյին նրան: Արայի կողքից սլանում եր մոթալ փափախով ձիավորը: Նա ողում մտրակը ծածանեց: Անզգուշությունից հարվածը շրմփաց Հելլադայի ազդրերին: Նժույզը փրփրեց, գլուխը կռացրեց, պարանոցին կամարի ձև տվեց, թռամ:

Ճանապարհը բոլորովին դատարկ եր: Նրա յեզրերին շարվել էյին մի քանի դրոշակավոր պսիհնորդներ:

Ճանապարհի լացնքով քաշված էյին թզաչափ լայնությամբ սլիտակ գծեր: Անզգայացած ճանապարհը ձիերի դոփշունից զարթնեց: Նրան կից հարթավայրում աղմուկը հետզհետե աճում եր: Ուռիները ճյուղերին թառած պա-



տանիներն ու մանուկները քանի գնում, սուլոցներն  
ուժեղացնում էյին: Նվազախումբը նվազում եր:

Վերջապէս, ահա առշավախումբը:

— Թոխր,— ճշաց Սրան:

Կրակ կտրած Հելլագան առաջին բարյերից ամենից  
առաջ թռավ:

Ծափեր, ականջ ծակող սուլոցներ, ձիերի լարխինջ ու  
դոփշուն, հարայ-հրոց, մտրակների շառաշյուն:

— Ե՛ր, Սրան, ջանիկս, ծիծեռնակ, ազիզ, անուշիկս,  
ամսթով չմնաս, քաղցր բալիկս,— բղավում եր Տիտոս պապը,  
թափահարում ձեռնափայտն ու վեր-վեր թռչում:

Սմբոխը շրջափակել եր դատավորի սեղանը:

Ծ... գյուղակի կոլանտեսականները խմբվել էլին ա-  
ռանձին: Մի հանգամանք նրանց թվում եր շատ հանելու-  
կային: Սրան ինչպէս և Հելլագային ձեռք բերել:

Հանկարծ թնդաց ձիերի դոփշունը: Հանգիստանե-  
րից շատերն արդէն գուշակում էյին, թե մրցակիցներից  
վորը կհաղթանակի:

Մանուկներն ու պատանիները, վոր մինչ այդ խոսում  
էյին ձիերի լավ ու վատի մասին, վեճը կտրեցին, սկսե-  
ցին սուլել ու ազմկել:

Արշավախումբի առաջից թռչում էյին յերեք ձիավոր:  
Չախ կողմից շարժված ատամով յերիտասարդն եր, աջ  
կողմից սոթալ փափախով գյուղացին, լսկ մեշտեղից, նրան-  
ցից յերկու քայլ առաջ Սրան:

Հելլագան վտտից գլուխ շուր եր դարձել, լսկ մեծ-մեծ  
աչքերը ցուում էյին: Նա թռչում եր ու թռչում:

Կտրելու ճանապարհը մնացել եր հազիվ յերեք հա-  
րյուր մետր: Տաններկու մարդկային ու նույնքան կենդանա-  
կան սիրտ բաբախում էյին ծանր ու անհամաշափ:

Հանկարծ մտրակները մեկին թռան վեր: Բացի Սրայի  
մտրակից:

Վճռական հարվածներ:

Հելլադան ճարպիկ ձիավարին շատ լավ էր հասկանում: Նա զգաց, թե ինչպես Արան փաղաքուշով էր բաշը շոյեց:

— Հելլադա, պայծառիկա, ախր հավաքիր ուժերդ, մի քիչ, շատ քիչ, դե, դե... դե, թո՛խր, ջանա, թո՛խր սիրունիկա, դե, դե...

Ձիու առաջ կաշու մեջ ձգված ջիլերի ցանցի տակ նշմարվում էլին ուռուցիկ մկանները: Հանկարծ նրանք թրթռացին, ապա կծկվեցին ու ձի գեկան: Ձին մի արտասովոր ջերմութունից սարսռեց: Նա փոնչաց, բաշը թափահարեց: Իսկ հետո... Հելլադան վնրտեղ էր... մրցակիցները մնացին հեռու-հեռու...

— Եճեյ, — ցնծութունից խեղդվում ու գոչում էր Արան:

Յերկրորդ և վճռական հաղթանակ: Առաջին բարյերից ամենից առաջ նորից Հելլադան թռավ: Նրան հետևեց ջարդված առամով յերիտասարդի ձին, մոթալ փափախով գյուղացու զամբիկը, հետո բոլոր ձիերը:

Ամբոխն ալիք-ալիք շարժվեց:

Առաջավորներին ամբոխը շրջափակեց: Նրանց շառագունած զեմքերից քրտինքը հոսում էր: Վոմանք թաշկինակներով ճակատների քրտինքը մաքրում էին: Լավում էին ծանր հևոցներ:

Արան խիստ շառագունել էր: Քրտինքի առուն պառանոցի վրալից դանդաղ դալարվում էր:

Կռիվ ե: Կռիվը սաստկանում է,

Մարտկոցն է վորոտում,

Թշնամին նահանջում է,

Մենք առաջ ենք շարժվում:

Հանդարտ լերգու՛մ եր Արան:

Հանկարծ անհարմար գզաց, ձայնը մեկեն կտրեց:

— Դե, դե, շարունակիր, սատանա. — կանչեց հարևան գյուղացին:

Յերեվաց Տիտոս պապը:

— Այ, կեցցես, ախար տղա. — բարակ ձայնով ասաց նա, և շրթունքները չպապցրեց Արայի ճակատին:

Հետո բազմությունը շրջափակեց նրան: Մի ծաղկատար, մազոտ դեմքով մարդ կլավ նրա ոձիքից:

— Այդպես, լավիկ տղա, ուրեմն ձին դե՛լ յես խնամել: Ապրես, արժանի յես սիրունիկ շքանշանի...

Օ... գյուղակի կոլանտեսակա՛նները ծաղկատարի ձեռքից Արային ազատեցին:

— Եդ վո՛նց, ազիզ ջան, ախր են շան վորդին ձին թոցրե՛լ եր. — մեկեն վրա տվին նրանք:

Խնդրեցին ամեն ինչ պատմել:

— Պատմությունը լերկար ե, տարի կքաշի, — առարկեց Արան:

Ի վերջո Տիտոս պապի՝ քաղցրիկ լեզուն բանը հարթեց: Արան հանդարտ ձայնով սկսեց պատմել:

Հետաքրքրվողների բազմությունը խտացավ: Յետեվում խմբվածները սարսափելի ջանքեր եյին թափում, աշխատում եյին Արայի խոսքերը վորսար:

— Բեր՛ում են, բեր՛ում... — հանկարծ բղավեցին յերեխաները:

Ճանապարհով կենտրոն եյին մտնում չորս հեծյալ միլիցիոններն: Նրանք շրջապատել եյին Շավասպին և ընկեր՞ջը:

Ավազակների գե՛նքերը կախված եյին նրանց ձիերի թամբերից:

Ամենից վերջում քայլում եր մի սպիտակ ձի: Այդ

նախկին ոտամխարի յերկվարն եր, հեծել եր Մ... գլու-  
ղակից մի պատանի:

— Լազո ջան, թալաղի շնորհավոր, բերդի մեջ բա-  
րով-խերով մաշվես—կատակեց մի յերխտասարդ:

Բրքիջ բարձրացավ:

Մի պառավ կին նրանց շանչեց: Նա շրջործկոմի  
քարտուղարի մայրն եր: Նրա վորդուն Շավասան ու ըն-  
կերը դարանից սպանեցին: Դեպքը պատահեց ութ ամիս  
առաջ:

— Վանյ, ձեր դար ու փոսը տեսնեմ, դժոխքի շներ, են  
աղիդ բալխ արլունով ձեր աչքերը քոռանան, վանյ, ասու-  
կրակով խորովվեք, մուրազներդ փուշ դառնա...

Կալանավորներն անհետացան:

Պառաջի առաջացավ դեպի Արան:

— Ջահել-Ղիվան, շարմաղ մագերիդ մասաղ, ես շնե-  
րի թալաղը դու սարքեցիր, թուշդ պաշեմ—ասաց քար-  
տուղարի մայրը:

Նա Արային վողջագուրեց, ճակատը ծածկեց համ-  
բույրներով:

— Ե՛ր, ժողովուրդ, սիրունիկ, ջահել տղերք, սգնեցեք  
ինձ, թոցրեք քաջիս—գոչեց պառավը:

Բարձրացավ աղմուկ և իրարանցում:

— Թոցրեք...

— Տուր ինձ....

— Հոպ, հան...

— Շմավոն, տուր...

— Քաղցրիկիս դեսը տվեք...

— Եդ անուշին մի պաշ տվեք...

— Դե-սր...

— Ուռուս...

Նվազախումբն սկսեց նվազել...

Հանկարծ մի շուն կլանչեց: Ամբոխի ուլիքվող զանգ-

վածը ճեղքվեց: Քիչ հետո նա կանգ առավ, պայծառ աչքերով նայեց տիրոջը: Կենդանին ծառացավ լետելի թաթերին, դռնչը պարզեց վեր, յերկար ու ձիգ հաշեց: Տիրոն եր:

Միջոցին բոցավառվում եր: Յերկնակամարում փշրվում եր արևի սկավառակը: Մմբոխը ծփում եր ու գոչում:

— Ուռռւււ...

— Ուռռւււ...

— Ուռռւււ...

Գրանից հետո սկսվեց բերքի տոնը, միախնդր, հասարակական գրոսանքն ու զվարճությունը...



Պատ. խմբադիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբադիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավիտի լիազոր՝ Վ. 2049. Հրատ. 4631.

Պատվեր 458. Տիրած 3000.

Քուղթ 62×94. Տպագր. 1  $\frac{3}{4}$  մամ.

Մեկ մամ. 24.480 սլան.

Հանձնված է արտադրության 10 մայիսի 1939 թ.

Մտորագրված է տպագրության համար 27 ապրիլի 1939 թ.

---

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030752

(074)

ԳԻՆԸ 70 ԿՄՄ.

289

30752



Մ. ՄԱԼՒԱՍՅԱՆ  
ԵԼԼԱԴԱ  
ԳԻՅ Արմ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ

ՖՐՈՎ. 4